ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

16.06.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետի պաշտոնակատար Հ.Ավետիսյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Կ.Աշրաֆյանը - գլխավոր քարտուղար
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Ա.Շահբազյանը - մարզպետի օգնական
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Վ.Հովհաննիսյանը, Ա.Հակոբյանը, Ն.Բարիկյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Գ.Բաղդասարյանը, Կ.Շեկոյանը- մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**
   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/
2. **Այլ հարցեր**:

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ Կ.Ադամյանը, Ս.Մակարյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ն.Բարիկյանը, Ռ.Մարգարյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Գ.Բաղդասարյանը, Կ.Շեկոյանը և Ա.Հակոբյանը ներկայացրեցին նախորդ ժամանակաշրջանում իրականացված աշխատանքների և տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ տեղեկատվություն:

2. Մարզպետի պաշտոնակատար Հ.Ավետիսյանը հանձնարարեց.

2.1 ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կ.Ադամյանին՝

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում և ենթակա կազմակերպություններում առկա թափուր պաշտոնների, հայտարարված մրցույթների մասնակիցների և արդյունքների վերաբերյալ՝ դրանց առկայության դեպքում ներկայացնել տեղեկատվություն մարզպետին:

3. Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

2025թ. հունիսին մարզի համայնքներում տեղացած կարկուտի հասցրած վնասների վերաբերյալ արձանագրությունները ամփոփել և 1-օրյա ժամկետում սահմանված կարգով ներկայացնել տեղեկատվություն:

4. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

Շարունակել իրականացնել շինարարական օբյեկտների ստուգայցերը և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն մշտադիտարկումների վերաբերյալ:

17/06/2025

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99